ԱՐԵՄՏԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

WESTERN ARMENIA STATE
NATIONAL ASSEMBLY

Արձանագրություն

Արեւմտեան Հայաստան Պետության (ԱՀՊ) Ազգային Ժողովի արտաքին

հարաբերությունների հանձնաժողովի նիստում 2022թ դեկտեմբերի 9-ին և 21-ին տեղի ունեցան քննարկումներ՝ «Հայաստանի Հանրապետութեան պարլամենտում Արեւմտահայութեան 12 մանդատների իրավահաջորդութեան ընդունման և Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան 1919թ մայիսի 27-ի № 1427 որոշման վերաճանաչումը թեմայով:

Օրակարգ

(ԱՀՊ) Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստում լսեց վարչապետ՝Ա.Մկրտչյանի «Հայաստանի Հանրապետութեան. պարլամենտում Արեւմտահայութեան 12 մանդատների իրավահաջորդութեան ընդունման և Հայաստանի Հանրապետության կառավարութեան 1919 թ մայիսի 27-ի № 1427 որոշման վերաճանաչումը» զեկույցը:

(ԱՀՊ) Ազգային Ժողովի և արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ՝ Տ. Բագրատունին հարցը դրեց քվեարկության: Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամները չորս կողմ, մեկ ձեռնպահ քվերակությամբ կայացրեց հետևյալ որոշումը :

ՈՐՈՇՈՒՄ

1. (ԱՀՊ) Ազգային ժողովը որպես շարունակող ընդունում է՝

• 1919թ. մայիսի 27-ի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետութեան Պառլամենտում արեւմտահայութ եանը 12 մանդատներ տրամադրելու մասին » № 1427 որոշումը:

• 1990թ օգոստոս 23-ի Հայաստանի անկախության մասին Հռչակագիրը և

կարևորում է «1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթների զարգացումը» և նաև այդ հիմքով գործող ՀՀ Սահմանադրությունը:

• ՀՀ խորհրդարանում Արեւմտահայերի իրավունքները ներկայացնող 12 մանդատ ունենալու իրավահաջորդությունը և ՀՀ խորհրդարանում Արևմտահայության իրավունքների շարունակողի գործառույթը:

2. Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ, 23-րդ, 28-րդ,29-րդ, 50-րդ, 51-րդ, 70-րդ հոդվածները, ՀՀ ԱԺ-ի նախագահին փոխանցել.

• սույն Որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 1919թ. մայիսի 27-ի № 1427 որոշման պատճեն 1919թ .



• Հայաստանի Հանարպետության օրենսդիր մարմնում արևմտահայության

օրենսդրական իրավունքները ներկայացնող պատգամավորների ցուցակը ։

Հայաստանի Հանրապետության 1918-1920թթ

Խորհրդարանի 1-ին գումարման արևմտահայ պատգամավորների ցուցակ

• 1.Արմեն Սասունի

• 2.Արմենակ Մաքսապետյան

• 3.Արսեն Կիտուր

• 4.Զավեն Կորկոտյան

• 5.Հմայակ Մանուկյան

• 6.Հայկակ Կոսոյեան

• 7 .Հայրապետ Հայրապետհան

• 8.Հայկ Պոնապարտյան

• 9.Վան-Փուշ (Եղիշե)

• 10.Վաղարշակ Հոխիկյան

• 11.Վարդան Առաքելյան

• 12.Վահագն Քրմոյան

3.Անհապաղ քննարկումներ սկսել կողմերի միջև՝ արևմտահայության 12

պատգամավորական մանդատի իրավունքները վերականգնելու շուրջ։

Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողով՝

Նախագահ ՝

Տ.Բագրատունի

Գերմանիա

Անդամներ՝

Ա.Մկրտչյան, ՌԴ

Վ.Մահշիկյան, Սիրիա

Վ.Մեսրոպյան ,ԱՄՆ

Կ.Հայրապետյան,Գերմանիա

Լ.Ուլուբաբյան , ԱՄՆ

ԱԺ նախագահ՝ Տ. Բագրատունի

23.12.2022